ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ: Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի մարտի 30-ին՝ ժամը 11:30, Տաշիրի համայնքապետարանում՝ Վ. Սարգսյան 94 հասցեում:

Մրցույթի է դրվում հետևյալ լոտերը՝

Լոտ 1. Տաշիր համայնք, ք. Տաշիր, 06-008-0467-0123 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահող, 0,869 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 17380 մեկնարկային գնով:

Լոտ 2. Տաշիր համայնք, ք. Տաշիր, 06-008-0467-0122 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահող, 0,880 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 17600 մեկնարկային գնով:

Լոտ 3. Տաշիր համայնք, ք. Տաշիր, 06-008-0467-0121 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի վարելահող, 0,416 հա, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 8320 մեկնարկային գնով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա/ հայտ,

բ/ մրցույթի մասնակցության համար սահմանված 2000 ՀՀ դրամի չափով վճարի անդորրագիր,

գ/ անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է 2023 թվականի մարտի 27-ին՝ ժամը 18:00-ին:

Մրցույթի անցկացման օրը վճարվում է նախավճար հողամասի մեկնարկային գնի 5 % չափով: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:

Մրցույթում հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է Տաշիր համայնքի բնակչին կամ Տաշիր համայնքում գրանցված իրավաբանական անձին:

Մրցույթի կանոնակարգին մասնակիցները կարող են ծանոթանալ ամեն օր՝ ժամը 9:00–18:00 ընկած ժամանակահատվածում Տաշիրի համայնքապետարանի գյուղատնտեսության, հողօգտագործման և բնապահպանության բաժնում:

Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը անց է կացվելու 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրիլի 10-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-21-68, 2-34-06 հեռախոսահամարներով:

Տաշիրի համայնքապետարան